կագրական առանձնահատկություններով: Շրջանում կան հին բազիլիկներ, վաղ միջնադարյան գմբեթակերտ հորինվածքներ՝ փարթամ, մեծածավալ վանական մի հաստատություն և վերջապես լավ պահպանված բերդ ու միայն քանակական սակավությունն է, որ թույլ չի տալիս ըստ արժանվույն գնահատել շրջանի ճարտարապետական ժառանգությունը:

Վաղ միջնադարում Նոյեմբերյանի շրջանը կազմել է Գուգարք նահանգի հարավարևելյան սահմանային հատվածը: X-XII դդ. պատկանել է Կյուրիկյաններին՝ լինելով Տաշիր-Ձորագետի թագավորության կազմում: Շրջանի որոշ հատվածներ մտել են Վահրամյանների տիրույթների մեջ:

Առանձին գավառներ (Կանգարք, Կողբափոր) XII-XIII դարերում պատկանել են Զաքարյաններին: Դատելով Բերդավանի հզոր ամրոցից, գավառն ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն: Սակայն Մշկավանքի և Կոթիի Ս. Սարգիս նշանավոր վանական հաստատությունների առկայությունը վկայում է շրջանում մշակութային ու կրթական մեծաբովանդակ օջախների գործունեության մասին:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

Քաղաքում հին և նշանավոր հուշարձաններ չկան: Միակ՝ բազիլիկ եկեղեցին վերանորոգված է XIX դարում: Քաղաքի գործող գերեզմանոցում կան մի քանի սովետական խաչքարեր, որոնցից երկուսն ունեն հիշատակագրություն.

1057. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, ցածր պատվանդանով, վրան 7 խաչապատկերներ, 1 տող.



ԹՎ[ԻՆ] ՋԴ (1455) Մ...ԻԵ...:

Ծանոթ. Ննջեցյալի անունը կիսաեղծ է, չի կարդացվում:

1058. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, 2 տող.

ԹՎ[ԻՆ] ՌՂԲ (1643):
ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԹԱՄԱՄԻՆ:

ՄՇԿԱՎԱՆՔ (ՄՇԱԿԱՎԱՆՔ)

Գտնվում է Կողբ գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, շրջկենտրոնից ոչ հեռու: Վանական շենքերի խումբը բաղկացած է Ս. Աստվածածին անունը կրող եկեղեցուց և գավթից: Եկեղեցին թաղածածկ միանավ սրահ է՝ մեկ զույգ բավականին շքեղ կիսակլոր որմնամույթերով: Բեմական խորանի երկու կողմերում կառուցված են երկհարկանի ավանդատներ: Որմնամույթերը իրենց պրոֆիլավորվածությամբ մտածել են տալիս, որ այն սկզբնապես եղել է գմբեթասրահ և թաղածածկի է վերափոխվել 1139 թ. երկրաշարժից